ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՆԵՐՍԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՂԱՊԱԼՅԱՆԻՆ ԱՐՔՈՒԹՅԱՆ ՊԱՏԻՎ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՆԵՐՍԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՂԱՊԱԼԵԱՆԻՆ ՀԱՐԱՋԱՏ ՈՐԴԻՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Ս. Էջմիածին

Բարին Աստուած Իր լոյս հովանու տակ շէն ու պայծառ է պահում մեր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, որ մշտապէս Սուրբ Հոգու կենարար շնորհներն է բաշխում իր սուրբ Սեղանից մեր հաւատացեալ ժողովրդին ի Հայաստան և ի սփիւռս աշխարհի:

Մենք հոգեպէս մխիթարուած ենք, որ Սուրբ Էջմիածինը հայ հաւատացեալ ժողովրդի ծոցում իր այս առաքելութիւնը ի կատար է ածում, շնորհիւ նաև Մայր Աթոռիս ուխտապահ միաբանների նուիրեալ աշխատանքի:

Սիրելի Սրբազան, Դուք ևս Ձեր կեանքը մանուկ հասակից սկսեալ նուիրել էք մեր Եկեղեցուն և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին անվարան հաւատարմութեամբ ու ժրաջան աշխատանքով:

Արդ, ջերմապէս գնահատելով Ձեր քսանհինգ տարիների հոգեշէն ծառայութիւնները այստեղ և արտասահմանում, այլև վերջին տարիների Ձեր կատարած պատասխանատու աշխատանքը իբրև Մայր Աթոռիս դիւանապետ, սոյն Մեր հայրապետական կոնդակով Ձեզ շնորհում ենք ԱՐՔՈՒԹԵԱՆ պատիւ, սրտեռանդ աղօթքով, որ Տէրը Ձեզ շնորհի բազում արևոտ տարիներ,

քաջառողջութեամբ շարունակելու համար Ձեր առաքելութիւնը Ձեզ յատուկ խանդավառ հոգևոր եռանդով ու ոգեշնչումով, մեր մայր Եկեղեցու և մայր երկրի գերագոյն շահերի գիտակցութեամբ:

«Հսկեցէք, հաստատուն կացէք ի հաւատս, ժրացարուք, զօրացարուք: Ամենայն ինչ ձեր սիրով եղիցի» (Ա Կորնթ. ԺԶ 13): Ամէն:

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 21 Սեպտեմբերի
1986 Փրկչական ամի,
եւ ի տումարիս Հայոց ՌՆԼԵ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:
Հմր. 1451